Արձանագրություն N 2

N ԱՔ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/2 ծածկագրով **Վերադաս պատվիրատուի** կարիքների համար **վառելիքի ձեռքբերման** ՇՀ ընթացակարգի հայտերի գնատատող հանձնաժողովի

Հայտերի բացման նիստի

ք. Աշտարակ 09.08. 2016թ.

Ժամը՝ 11,00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Հ. Բաղդասարյան

Անդամ(ԳՆԱՀԱՏՈՂ)՝ Ս. Գրիգորյան

Անդամ(ԳՆԱՀԱՏՈՂ)՝ Է. Խաչատրյան

Անդամ(ԲԱՑՈՂ)՝ Հ. Հայրապետյան

Անդամ(ԲԱՑՈՂ)՝ Դ. Հովհաննիսյան

Քարտուղար՝ Կ. Ռուստամյան

1. Գնման հայտ ներկայացնելու ծանուցում է ուղարկվել 29.07. 2016թ. բոլոր «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով գնման ընթացակարգով շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին :

2. Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգին ոչ մի հայտ չի ներկայացվել և ընթացակարգը հայտարարվում է չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

3. Հայտարարել ԱՔ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/2 ծածկագրով **ՇՀ ընթացակարգի չկայացման** հայտարարության տեքստերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4. Հիշեցնենք որ,

Գնումն իրականացվում էր հիմք ընդունելով 10 փետրվարի 2011թ. ՀՀ Կառավարության N168-Ն որոշման 84-րդ կետը.

84. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու դեպքում կիրառվում են հետևյալ պայմանները՝

1) հայտերի ներկայացման, գնահատման, ընտրված մասնակցի որոշման ու պայմանագրի կնքման գործընթացն իրականացվում է սույն կարգով սահմանված պայմաններով.

2) ապրանքների գնման դեպքում պայմանագրով (նախագծով) սահմանվում է, որ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը պատվիրատուն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սույն կարգով սահմանված պահանջներով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով պատվիրատուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիր կնքած անձին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և կնքվելիք պայմանագրի փոփոխության նախագիծը: Եթե մասնակիցը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի

փոփոխությունը, ապա այդ մասով պատվիրատուն ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է նախկինում կնքված պայմանագիրը՝ առանց պայմանագրի կողմի նկատմամբ պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

Արդյունքում քանի որ ԱՔ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/2 ծածկագրով ՇՀ ընթացակարգին ոչ մի հայտ չի ներկայացվել և ընթացակարգը հայտարարվել է չկայացած 29 հունվար 2016թ. Կնքված N ԱՔ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/1-Ա ծածկագրով և 29 հունվար 2016թ. Կնքված N ԱՔ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/1-Կ ծածկագրով պայմանագրերի 9.5 կետերը համարել կատարված և 29 հունվար 2016թ. Կնքված N ԱՔ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/1-Ա ծածկագրով և 29 հունվար 2016թ. Կնքված N ԱՔ-ՇՀԱՊՁԲ-15/1-16/1-Կ ծածկագրով պայմանագրերը թողնել ուժի մեջ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Նախագահ՝ Հ. Բաղդասարյան

Անդամ(ԳՆԱՀԱՏՈՂ)՝ Ս. Գրիգորյան

Անդամ(ԳՆԱՀԱՏՈՂ)՝ Է. Խաչատրյան

Անդամ(ԲԱՑՈՂ)՝ Հ. Հայրապետյան

Անդամ(ԲԱՑՈՂ)՝ Դ. Հովհաննիսյան

Քարտուղար՝ Կ. Ռուստամյան